

ղեցին՝ Տին Աւագ-ուրբաթ եկեղեցի էր, իսկ Ս. Գրիգորի աշտարակամատուն մեծ աշտարակն էր ամրոցին: Ի հաստատութիւն յառաջ կը բերեն որմերու վրայ որթողքսական ըմբռնամամբ նկարուած Տին նկարներն ու սրբոց պատկերները, որ տակաւին կ'երեւան, եւ Ստեփան Մեծին ժամանակի սովորական որմաղարդերն, ինչպէս՝ վարդ, ծաղիկ, նկարեալ եւ արծնեալ աղիւս, քարեղէն ոլորեալ պսակներ, որպիսիք ցայսօր ամէն նոյնպիսի շինուածոց վրայ կ'երեւան: Գարձեալ կ'ըսուի՝ որ այս եկեղեցիք երբ փլուզու վրայ էին, Մոլտաւիոյ Թէոփիլոս մետրապոլտին ժամանակ⁸⁸ ուրիշ երկու եկեղեցեաց հետ հարուստ Հայու մը ծախուեցաւ 600 տուբաղի: Հայք այս եկեղեցին նորոգեցին, եւ իրենց աստուածային պաշտամանց յարմարցուցին⁸⁹:

Սակայն Զամբայի Ս. Աւքսէնոս եկեղեցւոյն մէջ մինչեւ ցայսօր կեցող Ակոբշինի տապանաքարին արձանագրութիւնն երկու աւանդութիւնքն ալ անհիմն կը ցուցնէ:

Յամին 1569 Լուպլինի պետական համագումար ժողովն Լեհաստանի ամէն ոչ-կաթողիկեայ բնակիչներն արտաքսեց, որով Լեհաստանի արեւելեան Հայք մերժուեցան. ասոնք անկէ Մոլտաւիա դաղթեցին եւ Սուչաւա եւ այլ քաղաքներ հաստատուեցան, ուր ամենուրեք լաւ ընդունելութիւն գտան⁹⁰:

Պոկտան Գ Մոլտաւիոյ իշխանին ժամանակ, (1568—1572) որ էր որդի Աղեքսանդր Աբուշնէանու Վոյվոյտայի, Մոլտաւիոյ Հայոց վի-